Նախագիծ

արձանագրային

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ 2015 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվելիք գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի նախագծերին՝ համաձայն հավելվածի, և դրանք Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով:

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյան

Հավելված
ՀՀ կառավարության
2014 թվականի ---------- ի նիստի
N------ արձանագրային որոշման

ՑԱՆԿ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼԻՔ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ

№	*Ծրագրի վերնագիրը*	*Կատարող կազմակերպության անվանումը, գերատեսչական պատկանելությունը*	*Գումարը (հազար դրամ)*
1	Տեղեկատվական անվտանգության գիտահետազոտական կենտրոն	ՀՀ ԿԳՆ «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ	10868.0
2	ԼՂՀ ջրային ռեսուրսների կառավարման հայեցակարգերի և ջրային ենթակառուցվածքների շահագործման տեղային կանոնակարգերի մշակում	ՀՀ ԿԳՆ «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ	20000.0
3	Մատենադարանի մեծադիր ձեռագրերի, հազվագյուտ փաստաթղթերի և հնատիպ գրքերի կոնսերվացման ու գիտատեխնիկական մշակման ծրագիր	ՀՀ ԿԳՆ «Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան)» ՊՈԱԿ	21000.0
4	Ազգային հետազոտական էլեկտրոնային ենթակառուցվածքի կիրառում բնագիտական խնդիրների լուծման համար	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	25000.0
5	Մեծամոր պատմահնագիտական արգելոցի համակողմանի ուսումնասիության III փուլ (ուշբրոնզեդարյան դամբարանադաշտ և վաղերկաթեդարյան քաղաքատեղի)	ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ	15000.0
6	Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները, ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ	9918.0
7	«Հայոց պատմություն» բազմահատորյակի հատոր II-ի գիրք I-ի տպագրություն	ՀՀ ԳԱԱ «Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ	17200.0

8	Հատուկ վտանգավոր ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման և բուժման նոր դեղանյութերի ստեղծում և ներդրում գյուղատնտեսության և առողջապահության պրակտիկայում	ՀՀ ԳԱԱ «Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	15000.0
9	Հայաստանի Հանրապետությունում արտադրված սննդամթերքում պեստիցիդների մնացորդների մոնիթորինգ	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	15000.0
10	Իրանաբնակ թյուրքախոս էթնիկական խմբերի ծագումնաբանությունը և ազգային ինքնության խնդիրները	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	12000.0
11	ՋՋԷՌ ռեակտորով ատոմային էներգաբլոկի ԳՇԿ-ում ակուստիկ տատանումների առաջացման երևույթի հետազոտման փորձարարական կայանքի ստեղծում	ՀՀ ԷԲՊՆ «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ	9800.0
12	ՀՀ արտաքին միգրացիոն իրավիճակի եռամյա /2015-2017թթ./ մշտադիտարկում՝ ընտրանքային հետազոտության միջոցով	«Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան»	10000.0
13	Կլիմայի փոփոխման պայմաններում Հայաստանի և Բելառուսի համար ազգային արժեք հանդիսացող քաղցրահամ ջրային էկոհամակարգերի (Սևանա լիճ և Ախուրյան ջրամբար՝ Հայաստան, Նարոչ, Հարավային Վոլոս լճեր՝ Բելառուս) հետազոտում	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	16000.0
14	«Տեղեկատվական անվտանգություն» թեմայով ձեռնարկի ստեղծում	«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ	10000.0
15	Հայոց արքաների դամբարանների հետազոտում	ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ	17000.0
16	Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ	ՀՀ պաշտպանության նախարարություն	1615620.2
Ընդամենը			**1839406.2**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1231–Ա որոշման և Հայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցի պահանջների, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N1123 որոշման՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեում ընդգրկելու նպատակով գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման ներկայացվում են թվով տասնհինգ գիտական ծրագրերի նախագծեր:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման հայտը 2015 թվականի համար կազմում է **1839406.2** (մեկ միլիարդ ութ հարյուր երեսունինը միլիոն չորս հարյուր վեց հազար երկու հարյուր) հազար դրամ, որից 1615620.2 (մեկ միլիարդ վեց հարյուր տասնհինգ միլիոն վեց հարյուր քսան հազար երկու հարյուր) հազար դրամը նախատեսվում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող «Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների» համար:

Ցանկում բերված տասնհինգ ծրագրերից տասը՝ 206786.0 (երկու հարյուր վեց միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար) հազար դրամ ընդհանուր ծավալով, նախորդ տարվանից գործող ծրագրերի շարունակությունն են: Դրանք են՝ «Տեղեկատվական անվտանգության գիտահետազոտական կենտրոն», «Մատենադարանի մեծադիր ձեռագրերի, հազվագյուտ փաստաթղթերի և հնատիպ գրքերի կոնսերվացման ու գիտատեխնիկական մշակման ծրագիր», «Ազգային հետազոտական էլեկտրոնային ենթակառուցվածքի կիրառում բնագիտական խնդիրների լուծման համար», «Մեծամոր պատմահնագիտական արգելոցի համակողմանի ուսումնասիության III փուլ (ուշբրոնզեդարյան դամբարանադաշտ և վաղերկաթեդարյան քաղաքատեղի)», «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները, ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները», «Հայոց պատմություն» բազմահատորյակի հատոր II-ի գիրք I-ի տպագրություն», «Հատուկ վտանգավոր ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման և բուժման նոր դեղանյութերի ստեղծում և ներդրում գյուղատնտեսության և առողջապահության պրակտիկայում», «Հայաստանի Հանրապետությունում արտադրված սննդամթերքում պեստիցիդների մնացորդների մոնիթորինգ», «Իրանաբնակ թյուրքախոս էթնիկական խմբերի ծագումնաբանությունը և ազգային ինքնության խնդիրները», «ՋՋԷՌ ռեակտորով ատոմային էներգաբլոկի ԳՇԿ-ում ակուստիկ տատանումների առաջացման երևույթի հետազոտման փորձարարական կայանքի ստեղծում»,

Նոր ծրագրերն են՝ «ԼՂՀ ջրային ռեսուրսների կառավարման և ջրային ենթակառուցվածքների շահագործման արդյունավետության բարձրացման ուղիները» ծրագիրը՝ 20000.0 (քսան միլիոն) հազար դրամ ֆինանսավորմամբ, «ՀՀ արտաքին միգրացիոն իրավիճակի եռամյա (2015–2017թթ.) մշտադիտարկում՝ ընտրանքային հետազոտության միջոցով» ծրագիրը՝ 10000.0 (տասը միլիոն) հազար դրամ ֆինանսավորմամբ, «Տեղեկատվական անվտանգություն» թեմայով ձեռնարկի ստեղծում» ծրագիրը՝ 10000.0 (տասը միլիոն) հազար դրամ ֆինանսավորմամբ, «Հայոց արքաների դամբարանների հետազոտում» ծրագիրը՝ 17000.0 (տասնյոթ միլիոն) հազար դրամ ֆինանսավորմամբ և «Կլիմայի փոփոխման պայմաններում Հայաստանի և Բելառուսի համար ազգային արժեք հանդիսացող քաղցրահամ ջրային էկոհամակարգերի (Սևանա լիճ և Ախուրյան ջրամբար՝ Հայաստան, Նարոչ, Հարավային Վոլոս լճեր՝ Բելառուս) հետազոտում» ծրագիրը՝ 16000.0 (տասնվեց միլիոն) հազար դրամ: Վերջինս իրականացվելու է համաֆինանսավորման սկզբունքով, համաձայն 2013 թվականի հոկտեմբերի 14-ին Երևանում կայացած գիտատեխնիկական համագործակցության հարցերով հայ-բելառուսական համատեղ հանձնաժողովի նիստի ընթացքում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի և Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի միջև կնքված «Սևանա լճում Հայաստանի և Բելառուսի ազգային հարստություն հանդիսացող քաղցրահամ ջրամբարների էկոհամակարգերի ուսումնասիրման միջազգային գիտագործնական կենտրոն-բիոլոգիական կայան ստեղծելու մասին» պայմանագրի: